

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճավան համայնքի ղեկավար Լ. Խաչատրյանի 2011թ. կատարած աշխատանքների մասին:

Հարգելի համագյուղացիներ, հյուրեր և ավագանու անդամներ Ձեզ են ներկայացնում հաշվետվությունը 2011թ. իմ կողմից Լճավան համայնքում կատարված աշխատանքների և բյուջեի կատարման մասին:

Լճավան համայնքում կա 158 տնտեսություն, ապրում են 700 բնակիչ, որոնց 10%-ը փախստականներ են:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» և Հայաստանի Հանրապետության «Համայնքային ծառայության մասին» օրենքով համայնքի ՏԻՄ – մարմիններին իրենց գործնեությունը հիմնականում նպատակաուղղվել է համայնքի բնակչության հոգսերի և խնդիրների լուծմանը, համայնքում առկա սոցիալ տնտեսական հիմնախնդիրների բարելավման ուղղությամբ:

2011թ. գյուղապետարանի միջոցներով հարթեցվել և բարեկարգվել է գյուղամիջյան ճանապարհները, համայնքի ազգաբնակչության միջոցով մաքրվել է ոռոգման ցանցի ջրատարը, կատարվել է խմելու ջրագծի շուրջ 370գծմ. վերանորոգման և մաքրման աշխատանքները:

Միաժամանակ տեղեկացվում է, որ չնայած կատարած աշխատանքները՝ համայնքում դեռևս առկա է մի շաք և հիմնախնդիրներ, կապված ոռոգման ցանցի, խմելու ջրի համայնքային կենտրոնի և գազաֆիկացման, որի հնարավորությունը գյուղապետարանը չունի, խնդիրների լուծումը ընդգրկված է համայնքի սոցիալ – տնտեսական զարգացման քառամյա ծրագրում և ներկայացվել է վերադաս մարմիններին:

2011թ. ընթացքում համայնքի բնակիչների կողմից ստացվել է տարբեր բնույթի 18 դիմում, որոնց տրվում է համապատասխան ընթացք և լուծում:

2011թ. ընթացքում կատարվել է ավագանու 6 նիստ:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ:

Լճավանի գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 5 հոգուց, իսկ համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամից:

Համայնքի վարչական տարածքը 152.2հա է, որից վարելահող-700հա, տնամերձ -70հա, և 75.2հա այլ տեսքի հողեր:

2011թ. համայնքի բյուջեի սեփական եկամուտները կազմում է 5800.0 հազար դրամ, որի հավաքագրումը գյուղապետարանի կողմից կատարվել է 97.7-ով:

Բյուջեն ըստ սեփական եկամուտների մասի հետևյալն է

| N | Եկամուտների անվանումը | Նախատեսված | Փաստացի կատարված | կատարման % |
|---|-----------------------|------------|------------------|------------|
| 1 | Հողի հարկ             | 1.087      | 1.087            | 100        |
| 2 | Գույքահարկ            | 500        | 300              | 60         |
| 3 | հողի վարձավճար        | 500        | 400              | 80         |

Բյուջեի ծախսը աշխատավարձի և սոց հատկացման հոդվածներով՝

1.Աշխատավարձ – 4200 հազար դրամ

2.Սոց հատկացում – 1085 հազար դրամ

Լճավան համայնքի ղեկավար՝

Լ. Խաչատրյան